ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1965 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 45-ԱՄՅԱԿԻՆ

1965 թ. նոյեմբերի 25-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի գիտական նիստը՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման և Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորման 45-ամյակին։

Ներածական խոսքով նիստը բացեց պատմության ինստիտուտի դիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Գալոյանը։ Նա ընդգծեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հսկայական նշանակությունը սոցիալական և ազգային կեղեքումից հայ ժողովրդի ազատագրվելու գործում։

— Հայաստանում սովետական կարգերի հաստատումից ի վեր,—ասաց նա, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, որպես ՍՄԿՊ հավատարիմ ջոկատներից մեկը, անդուլ պայքար է մղել մեր երկրում սոցիալիզմի կառուցման լենինյան պլանի կենսագործման համար։

Խոսելով անցած 45 տարիների ընթացքում ազգային վերածննդի, ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի բնագավառներում հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումների մասին, ընկ. Գալոյանը կանգ առավ նաև պատմագրության արդի վիճակի և նրա առջև ծառացած մի շարք կարևոր խնդիրների վրա։ Նա մասնավորապես նշեց, որ չնայած մեր պատմագրության զգալի հաջողություններին, դեռևս հայ ժողովրդի պատմության վերաբերյալ բազմաթիվ հարցեր գիտական խոր լուսաբանման կարիք ունեն։

Անդրադառնալով վերջին տաս տարիների ընթացքում պատմագրության ասպարեզում կատարված աշխատանքներին, ընկ. Գալոյանը նշեց, որ կուսակցությունը հասարակական գիտությունների բնագավառի գիտաշխատողների առջև խնդիր է դնում պատմական փաստերը լուսաբանել պատմական օբյեկտիվության, երևույթների դասակարգային գնահատման տեսանկյունով, բացահայտել մեր կյանքի բարդ պրոցեսները, ակտիվ պայքար ծավալել բուրժուական գաղափարախոսության դեմ, մարքսիստորեն լուսաբանել մեր հասարակության արդի էտապի տեսական բազմաթիվ պրոբլեմները։

«Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և հայ ժողովրդի ազգային վերածնունդը» թեմայով զեկուցումով հանդես եկավ ՀԿՊ Կենտկոմի երկրորդ քարտուղար Հովհ. Բաղդասարյանը։

— Պատմությանը հայտնի են շատ հեղափոխություններ,—ասաց զեկուցողը,— բայց դրանցից ոչ մեկը չի կարող համեմատվել Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հետ, որը շրջադարձային կետ հանդիսացավ մարդկության պատմության մեջ, բաց արեց կապիտալիզմի կործանման և սոցիալիզմի հաղթանակի դարագլուխը։

Խոսելով բազմաշարյար հայ ժողովրդի կյանքում Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության կատարած դերի մասին, ընկ. Բաղդասարյանը նշեց, որ հեղափոխությունը, Լենինի ստեղծած կուսակցությունը հայ ժողովրդին փրկեցին անխուսափելի կործանումից, կյանքի կոչեցին բազմադարյան մեր ժողովրդին, ցույց տվեցին նրան երջանիկ ու բերկրալից կյանք կառուցելու ուղի։ 1920 թ. նոյեմբերի 29-ը դարձավ հայ ժողովրդի բազմադարյան պատմության դարձակետը, նրա ազգային վերածննդի սկիզբը։

Այնուհետև, զեկուցողը կանգ առավ դաշնակցականների տիրապետության ժամանակ Հայաստանի գյուղատնտեսության և արդյունաբերության օրհասական վիճակի լուսաբանման վրա, խոսեց այն հսկայական օգնության մասին, որ ցույց տվեցին ռուս մեծ ժողովուրդը և Սովետական Ռուսաստանի եղբայրակից մյուս ժողովուրդները Սովետական Հայաստանին՝ տնտեսական հետամնացությունը հաղթահարելու, սոցիալիստական արդյունաբերության, կոլտնտեսային գյուղատնտեսության, գիտության ու կուլտուրայի հուժկու զարգացման համար։

Պատմական գիտությունների դոկտոր Խ. Բարսեղյանի զեկուցումը նվիրված էր Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորմանը։ Զեկուցողը անդրադարձավ Հայաստանում մարքսիզմի առաջացման և տարածման պատմությանը, նշեց, որ Հայաստանում բոլ-

շևիկյան կազմակերպությունների առաջացումը սերտորեն կապված է մարքսիզմի գաղափարների տարածման, Վ. Ի. Լենինի և կոմունիստական կուսակցության գործունեության հետ։

— Տակավին անցյալ դարի 80-ական թվականներից,—ասաց զեկուցողը,—ցարիզմի անլուր հալածանքների և գրաքննչական դաժան պայմաններում մարքսիստական ուսմունքի առաջին կայծերը թափանցեցին հայ իրականության մեջ, հայ պարբերական մամուլում արձագանք գտավ Առաջին ինտերնացիոնալի և Փարիզի կոմունայի գործունեությունը։

Ընկ. Բարսեղյանն իր զեկուցման մեջ մանրամասնորեն խոսեց Հայաստանի կոմպարտիայի կազմավորման նախադրյալների, ձևավորման բուն պրոցեսի, Հայաստանում 1917—1920 թվականներին կոմունիստական շարժման ծավալման առանձնահատկությունների մասին։

Արխիվային փաստաթղթերի հիման վրա շարադրելով 1920 թ. հունվարյան կոնֆերանսի պատմությունը, զեկուցողը նշեց, որ կոնֆերանսը փաստորեն ավարտեց Հայաստանի տերիտորիայում մինչ այդ անջատ-անջատ գործող բոլշևիկյան կազմակերպությունների միավորումը համահայաստանյան կուսակցական ղեկավար մեկ օրգանի՝ ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեի մեջ և դրանով իսկ սկիզբ դրեց Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմակերպական ձևավորմանը։

«Հոկտեմբերյան հեղափոխությունը և ազգային հարցի լուծումը ՍՍՌՄ-ում 1917—1922 թթ.» թեմային էր նվիրված պատմական գիտությունների դոկտոր Ա. Մնացականյանի զեկուցումը։ Զեկուցման մեջ նա բնութագրեց ազգային հարցի տեղն ու նշանակությունը Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի համար մղված պայքարում, լուսաբանեց 1917—1922 թթ. լենինյան ազգային քաղաքականության կենսագործման գլխավոր հանրագումարները Անդրկովկասում և սովետական մյուս հանրապետություններում, վերլուծեց այդ գործում տեղ գտած սխալներն ու աղավաղումները։ Նա նշեց, որ վերջին տարիներին ուժեղացել է հետաքրքրությունը ազգային հարցի նկատմամբ. այդ կապակցությամբ անց են կացվել գիտական նստաշրջաններ ու կոնֆերանսներ, հրատարակվել են գիտական լուրջ հետազոտություններ և մենագրություններ։

Գիտական նիստում ելույթներ ունեցան պատմական գիտությունների թեկնածու Ա. Մելքոնյանը և տնտեսագիտական գիտությունների թեկնածու Գ. Իսահակյանը։

Վ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ